

**Գանատայի վարչապետ ձա-
րին Թրուտոյի շնորհաւորական
ուղերձը «Հորիզոն»ի 40-ամեա-
կին առթիւ**

Ուրախութեամբ կը յայտնեմ ջերմ
շնորհաւորանքս «Հորիզոն» շաբաթա-
թերթի ընթերցողներուն՝ 40-ամեակին
առթիւ: Այս մէկը բացառիկ առիթ է, որ
յետադարձ ակնարկ մը նետենք շաբա-
թաթերթին պատմութեան եւ ընդգծենք
անոր իրազօրծումները: 40 տարի շարու-
նակ «Հորիզոն»ը հաւատարմօրէն զե-
կուցած է Գանատայի հայ համայնքին
ընկերային, մշակութային եւ քաղաքա-
կան կեանքի իրադարձութիւններուն
մասին: Ես վստահ եմ, որ ան պիտի շա-
րունակէ հարստացնել հայ համայնքի
անդամներուն աւօրեան՝ ձայն տալով
անոնց յոյսերուն եւ երազներուն, ինչ-
պէս նաեւ մասնակցելով մեր հասարա-
կութեան վերաբերող բանավէճերուն:
«Հորիզոն»ի առնչուած իւրաքանչիւր
ոք իր համայնքին մօտ հպարտութիւն
պէտք է զգայ անոր նուիրումին համար:
Գանատայի Կառավարութեան
անունով կը շնորհաւորեմ ձեր գալիք
բոլոր նուաճումները:

**Հայոց պետականութեանը
սպառնացող ներկայ
ընթացքը խիստ
վտանգաւոր է.
ՀՅԴ Հայաստանի
Գերագոյն մարմնի
յայտարարութիւնը**

Վերջին ամիսներին, անդրադառ-
նալով դատաիրաւական համակարգի
չուրջ ծաւալուող իրադարձութիւններին,
մեր մտահոգութիւնն էինք յայտնել քա-
ղաքական իշխանութեան կողմից դա-
տարաններին եւ դատաւորներին նկատ-
մամբ ճնշումներ գործադրելու անթոյ-
լատելիութեան վերաբերեալ:
Ազգային ժողովի նախագահի ար-
տահերթ ելոյթ-կոչը եւ ԱԺ Իմ քայլը
խմբակցութեան ղեկավարի յայտարա-
րութիւնը ոչ միայն եկան հաստատելու
մեր մտահոգութիւնը, այլեւ ամբողջելու
այն իրողութիւնը, որ իշխող քաղաքա-
կան ուժը որդեգրել է ամբողջական մե-
նիշխանութիւն հաստատելու եւ սահմա-
նադրական կարգի տապալման ուղին:

ՀՅԴ... Ժառ. էջ 10

Նախարարունի Մելանի Ժոյի ներկայութեամբ կայացած «Հորիզոն»ի 40-ամեակի նուիրահաւաքէն գոյացաւ 60 հազար տոլար



Կարդալ էջ 3

Գանատայի Եարմութ քաղաքին մէջ բացումը կատարուեցաւ Հայոց Ցեղասպանութեան որբերու փրկարար Սառա Քորնիկի արձանին



Կարդալ էջ 5



Your Passport to Adventure.

2018 Passport
TOURING

Selling start from
\$50,900*

LEAP ON IT!

HONDA GABRIEL

Book your test drive with
**Kevorg Asadourian or
Haig Khobassarian**

7000, boul. Henri-Bourassa E.
Montréal, QC H1G 6C4
514 - 327 - 7777
www.hondagabriel.com

ARMENIAN HERITAGE CRUISE® 2020

January 12-19, 2020

▪ MIAMI ▪ JAMAICA ▪ LABADEE ▪ COZUMEL

Royal Caribbean's Oasis of the Seas

www.ArmenianHeritageCruise.com

SAYAT NOVA
DANCE COMPANY



CABIN OPTIONS

RATES*

INSIDE CABIN	\$1,069
CENTRAL PARK VIEW	\$1,169
OCEAN VIEW	\$1,279
CENTRAL PARK BALCONY	\$1,399
BOARDWALK BALCONY	\$1,399
OCEAN VIEW BALCONY	\$1,539
JUNIOR SUITES	\$2,329
GRAND SUITES	\$3,419

Rates are per person for double occupancy cabins:

Limited additional luxury suites available upon request. For pricing on triple and quad occupancy cabins, contact TravelGroup. Prices include Cruise, Port Charges and all AHC private events. Government tax of \$127.62 per person is additional. Rates and Information subject to change at any time without notice.

TRAVELGROUP
INTERNATIONAL

For Reservations and Information Contact:

TravelGroup International

Local: 561-447-0750

Toll Free: 1-866-447-0750 Ext 108 or 102

AHC@travelgroupint.com

125 SE Mizner Blvd, Suite 14, Boca Raton, FL 33432

You must book
with TravelGroup
to attend our
private Armenian
events.

KEV
ORKIAN

ARABO
ISPIRYAN

NERSIK
ISPIRYAN

SARINA
CROSS

JOIN US...

Dance Ensemble

Best Comedian

International Singers

Late Night Dance Parties

Cultural Lectures

CME Medical Program

Tavlou Tournament

Medical Professionals are invited to register for our "Challenges in Global Health" program offering 15.0 ACCME, CDE & CPE credits

Նախարարուհի Մելանի Ժոլիի Գերկայութեամբ կայացած «Հորիզոն»ի 40-ամեակի նուիրահաւաքէն գոյացաւ 60 հազար տոլար



Լուսանկարները՝ Մայք Թաշճեանի

Շաբաթ, 14 Սեպտեմբեր 2019-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Ահարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Հորիզոնի հիմնադրութեան 40-ամեակի պաշտօնական հանդիսութիւն-ճաշկերոյթը, ներկայութեամբ Դաշնակցային երեսփոխան Ճալալ Խուրիի, Գանատայի Զբօսաշրջութեան, լեզուի եւ ֆրանսախօսութեան նախարարուհի Մելանի Ժոլիի, Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերշ. Բաբգէն Սրբ. Արք. Չարեանի, Արժ. Տէր Գառնիկ Ա. Քհն. Գոյունեանի, Լաւալի Քաղաքապետարանի անդամ Արամ Էլահօգլի, Լաւալի Վիմի շրջանին Ազատական կուսակցութեան թեկնածու Աննի Քուլթրաքիսի, Ազգային Իշխանութեան, ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարաբաշեանի, ՀՅԴ Մոնթրէալի «Միհրան Փափազեան» եւ Լաւալի «Սարգիս Ալէքիւեան» կոմիտէներուն, յարակից միութիւններու եւ մարմիններու ներկայացուցիչներուն եւ «Հորիզոն»ին աջակցող բարերարներու եւ բարեկամներու հոծ բազմութեան մը:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ Գանատայի եւ Հայաստանի օրհներգներով, ապա օրուան բեմավարներ Կորիւն Գոյունեան (Հայերէն) եւ Տիանա Աքայա (անգլերէն) ողջունեցին ներկաները եւ հակիրճ անդրադարձ կատարեցին «Հորիզոն»ի 40-ամեայ գործունէութեան: Անոնք յայտնեցին. «Ազգային-հասարակական նիւթերու իր հրատարակումներով, բայց մասնաւորապէս հասարակական գաղութի վերջին 40-ամեայ պատմութեան ժամանակագրութիւնը կատարելով, «Հորիզոն» դարձած է գաղութային կեանքի հարազատ հայելին: «Հորիզոն» նաեւ այն բեմը եղաւ, ուր

արտացոլաց Դաշնակցութեան մտածողութիւնը, ուր ծաւալեցան համահայկական խնդիրներու շուրջ մտքերու փոխանակումներն ու բանավէճերը, ուր հնչեց ՀՅԴ Գանատայի կառույցի խօսքը եւ գրուեցաւ Հայ Դատի գծով մեր պայքարի օրագրութիւնը»:

Գեղարուեստական յայտագրով հանդէս եկաւ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ «Նոր ծաղիկ» մանկապատանեկան երգ-չախումբը, խմբավարութեամբ տիկին Էլիզապէթ Պողոսեանի Հարպոյեանի, նուագակցութեամբ տիկին Դալար Հարպոյեան Գալլօլեանի, մեկնաբանելով «Ով մեծառքան», «Մայրենի լեզու» եւ փունջ մը ժողովրդական ու ազգային երգեր: «Հորիզոն» երգով հանդէս եկաւ գանատահայ երգիչ Էլի Պէրպէրեան, նուագակցութեամբ տուտուկահար Վաղո Աղամեանի:

Խօսք առաւ Գանատայի ՀՅԴ Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարաբաշեան, որ շնորհաւորելէ ետք «Հորիզոն»ի աշխատակազմն ու աջակիցները՝ յայտնեց. «Հորիզոն»ը կը պատկանի մամուլի այն մեծ ընտանիքին, որ 19-րդ դարու վերջաւորութենէն կը կոչուի դաշնակցական մամուլ, այն յանձնառու, մարտունակ, իր խօսքն ու ըսելիքը չձամոյլ մամուլին, որ իր ձայնը լսելի դարձուցած է զբաւեալ Հայաստանէն, Հայաստանի Հանրապետութենէն, Արցախի Հանրապետութենէն, սփռուքէն՝ ամէնուրեք, պատնէշի վրայ կեցած այն ընտանիքին, որ կը կոչուի դաշնակցական մամուլ եւ կը մնայ անոր առաջատար ներկայացուցիչներէն մին»:

Ան իր խօսքը աւարտեց ըսելով. «Գաղափարը ինքնին գէնք է, եւ մեր ծնած օրէն մենք

անոր հաւատացած ենք. մէկ գաղափար մը բաւարար է, որ ամբողջ համայնք մը, ամբողջ ազգ մը շարժէ դէպի յատուկ ուղղութիւն. եւ մենք գաղափարը իբրեւ գէնք, իբրեւ մեր ազգագրական պայքարի ուղղութիւն ունենալով՝ պիտի շարունակենք, «Հորիզոն»ի դրօշով, մինչեւ մեր երազներու ամբողջական իրականացումը, հոսկէ մինչեւ Արցախ, մինչեւ ամբողջական Հայաստան»:

Նախարարուհի Մելանի Ժոլի իր խօսքին մէջ շնորհաւորեց գանատահայ գաղութն ու «Հորիզոն»ի մեծ ընտանիքը՝ նման կարեւոր լրատուամիջոց մը ունենալուն եւ անոր 40-ամեակին առթիւ: Ան կարեւորութեամբ շեշտեց Գանատայի մէջ խօսքի ազատութեան կիրարկումն ու ընկերակցական օրէնքներու համաձայն գործելը՝ «Հորիզոն»ի ճամբով, նաեւ յայտնեց, թէ «Հորիզոն»ը գանատահայ գաղութին համար այն կարեւոր հարթակն է Գանատայի հասարակական ու քաղաքական կեանքին մասնակից դառնալու: Նշենք, որ նախարարուհին չորս տարիէ ի վեր կը հովանաւորէ «Հորիզոն»ի ամառային աշակերտական վարժողական ծրագիրը:

Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Անահիտ Յարութիւնեանի ողջոյնի խօսքը տեսնելով փոխանցուեցաւ ներկաներուն, որուն մէջ առ յայտնեց. «Շաբաթաթերթի մշտապէս թարմացուող նիւթերով էլ աւելի է ընդլայնուած ընթերցողների շրջանակը: Անառարկելի է «Հորիզոն» շաբաթաթերթի աւանդը՝ հայապահպանութեան, հայոց լեզուի, հայրենի պատմութեան ու մշակոյթի տարածման գործում»:

Ան եզրափակեց խօսքը ըսելով.

«Մաղթում եմ, որ գալիք տարիները դառնան լրատուական նորանոր հորիզոններ նուաճելու, ստեղծագործական եւ հայրենասիրական ծրագիրներ իրագործելու տարիներ»:

Անկէ ետք ցուցադրուեցաւ «Հորիզոն»ի 40-ամեակին առթիւ պատրաստուած յատուկ տեսերիկ մը, որուն ձեւաչափը կատարած էր 2019 տարուան վարժողական ծրագրին գործակատար Յովիկ Կէտիկեանը:

Գանատայի վարչապետ Ճասթին Թրուտոյի շնորհաւորական ուղերձի ընթերցումէն ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն:

Խօսք առաւ «Հորիզոն» շաբաթաթերթի վարիչ խմբագիր Վահագն Գարաբաշեան, որ իր խօսքը սկսաւ յիշելով «Հորիզոն»ի այն գործընկերները, որոնք առյաւէտ բաժնուած են մեզմէ, ապա յիշեց նախկին խմբագիրներն ու գործընկերները եւ ողջունեց ներկաներն ու «Հորիզոն»ի մեծ ընտանիքը: Ան անդրադառնալով գանատական քաղաքական գետնի վրայ շաբաթաթերթին հանրային յարաբերական գործունէութեան՝ յայտնեց. «Այսօրուան դրութեամբ, «Հորիզոն» երկու անգամ հրաւիրուած է Գանատայի վարչապետին հետ մամուլի ասուլիսի, աւելի քան 10 գանատացի նախարարներու հետ հարցազրոյց կատարած է, ինչպէս նաեւ նահանգային վարչապետներու եւ քաղաքապետներու հետ»:

Ան անդրադարձաւ այն իրողութեան, թէ թրքական եւ ատրպէյճանական հակահայ քարոզչութեան դէմ «Հորիզոն» իր առաքելութեան հաւատարիմ՝ սուր կերպով հակադարձած է, որուն իր-

40-ԱՄԵԱԿ... Ծար. էջ 8

Հոգ2. Տ. Վարդան Վրդ. Թաշճեանն ու Արժ. Տ. Տաթև Ա. Քհն. Միքայելեանը կը նշանակուին Թորոնթոյի Ա. Աստուածածաին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներ



Տնօրինութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանին եւ Համախորհուրդ Թեմիա Կրօնական ժողովին եւ Ազգային վարչութեան, Հոգեշնորհ Տ. Վարդան Վարդապետ Թաշճեանն ու Արժանապատիւ Տ. Տաթև Աւագ Քահանայ Միքայելեանը նշանակուեցան Թորոնթոյի Ա. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներ:

Արդարեւ, Կիրակի, 18 Օգոստոս 2019-ին, Ա. Աստուածածնայ Վերափոխման Տօնի Ա. Պատարագի հոգեւոր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը Թորոնթոյի Համայնքին պաշտօնապէս ներկայացուց նոր հովիւները, խօսելով անոնց ծառայութեան եւ վաստակին մասին, կոչ ուղղելով որ ծխական Համայնքն ու ժողովականութիւնը սերտօրէն գործակցելով հովիւներուն հետ, նոր յաջողութիւններու հասցեն համայնքն ու ծխական շրջանի հաւաքական կեանքը:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի 2019-2020 տարեշրջանի վերամուտը



Հինգշաբթի, 29 Օգոստոս 2019-ի առաւօտուն Սուրբ Յակոբ Ազգային վարժարանէն ներս կրկին խանդավառ մթնոլորտ կը տիրէր: Ամառնային արձակուրդէն ետք, տնօրէնութիւն, ուսուցչական կազմ, աշակերտներ եւ ծնողք լծուած էին աշխատանքի, ի վերջոյ սպասուած վերամուտն էր:

Վ. եւ Ա. Սարաֆեան նախակրթարանի աշակերտները հաւաքուեցան դպրոցին բակը, որ զարդարուած էր գոյնզգոյն փուչիկներով, եւ դիմաւորուեցան իրենց նախորդ տարուան դաստիարակին կարօտալի ժպիտով: Աշակերտներուն յանձնուեցան պզտիկ դրօշակներ, որոնք կը համապատասխանէին 2019-2020 տարեշրջանին թեմային: Ապա անոնք միացան այս տարեշրջանի իրենց ուսուցիչ կամ ուսուցչուհիին, որ իր կարգին կը սպասէր զիրենք՝ դրօշ ձեռքին: Ապա տնօրէնուհի տիկին Լորի Ապրաքեան բարի գալուստ եւ յաջողութիւն մաղթեց բոլորին:

Դիւրացնելու համար ծաղիկ կարգի աշակերտներուն ընտելացումը դպրոցին եւ շրջապատին հետ, անոնք բաժնուած էին երկու խումբերու, հետեւաբար իրենց վերամուտը տեղի ունեցաւ երկու օրերու ընթացքին: Դասարանները զարդարուած էին գեղեցիկ ձեռագիր աշխատանքներով: Փոքրիկները ծանօթացան իրենց դաստիարակներուն, որոնք ամբողջ տարի մը պիտի զբաղին ու հետաքրքրուին իրենցմով, ապա նորեկ աշակերտները ծանօթացան դպրոցի զանազան բաժիններուն: Օրուան ամենէն յուզմունքալից պահն էր աւարտական կարգերու աշակերտներուն բարի գալուստի վարդեր նուիրելը ծաղիկ դասարանի աշակերտներուն, յիշելով թէ ինչպէս իրենք ալ օր մը դողդոջուն քայլերով մուտք գործած էին այս ամրոցը, եւ այսօր արդէն երիտասարդներ դարձած՝ պիտի հեռանան անկէ:

Իսկ Բաստրմաճեան երկրորդականի աշակերտները ներկայացան դպրոց դասարան առ դասարան: Անոնք Բաստրմաճեան թատերասրահէն ներս հանդիպում ունեցան տնօրէնութեան հետ, ստացան իրենց գիրքերն ու դասագրքերը, տեսնուեցան իրենց դաստիարակներուն հետ եւ կարճ պահ մը անցընելով դպրոցէն ներս, վերադարձան իրենց տունները, հաստատ գիտնալով թէ ամբողջ տարեշրջանի ընթացքին, կարաւառական ուսումնական ծրագրի կողքին պիտի վայելին Ս. Յակոբ վարժարանի իւրայատուկ եւ անզուգական հայկական մթնոլորտը, ընկերային մտերմութիւնը, հաճելի զրոյցներն ու խաղերը:

Բոլորն ալ ուրախ տրամադրութեամբ բաժնուեցան դպրոցէն, գիտնալով թէ սկսած են յաճախել իրենց երկրորդ տունը:

Բարի վերամուտ բոլորին:



Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca



ՀՕՄ-ի Մօնթրէալի «Սօսէ» մասնաճիւղը 2019-2020 ուսումնական տարեշրջանին համար կը տրամադրէ հետեւեալ երկու համալսարանական կրթաթոշակները

1. «Նուարդ Աբրահամեան, Մառա Լէյլէկեան եւ Էլիզապէթ Ալթունեան» կրթաթոշակ, երկու ուսանողներու
2. «Մոֆիա եւ Առէն Արզումանեան» կրթաթոշակ, մէկ ուսանողի

Ընտրութիւնը կատարուի կրթաթոշակի յանձնախումբի գնահատման, ինչպէս նաեւ աշակերտին յաջող նիշերուն եւ հայ համայնքէն ներս կամաւոր ծառայութեան հիման վրայ: Դիմումագիրը կարելի է ստանալ կապուելով ե-նամակի հետեւեալ հասցէին՝ arsmontrealscholarship@gmail.com կամ այցելելով ՀՕՄ-ի կայքէջը՝ ars-canada.ca/Montreal “Sosse”/ Programs/ ARS Scholarships and awards/ Montreal “Sosse” scholarships

Դիմումագրերը կ'ընդունուին մինչեւ
30 Հոկտեմբեր 2019:

Այցելեցե՛ք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցե՛ք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցե՛ք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցե՛ք շահեկան հարցազրոյցներ



SILVA SARKISSIAN
DENTUROLOGISTE
(514) 998-0928

19 տարուայ փորձառութիւն

Fabrication et réparation de PROTHÈSES DENTAIRES



Ատամնաշարի պատրաստութիւն,

Polyclinique de Montréal - 12245 Grenet, local 203, Mtl.
www.cartierville-denturologiste.com

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան հաղորդագրութիւնը

Դպրոցական վերամուտին հետ, ՀՅԴ Գանատայի Պատանեկան միութիւններն ալ կը վերսկսին իրենց աշխոյժ գործունէութիւնը: Արդէն նոր վերադարձած մայր հայրենիքէն, կրկնապատկուած հայրենասիրութեամբ ու ամրապնդուած ռոստոմեան կամքով, պատանիները Սեպտեմբեր 13-15 շաբաթավերջին սկսան իրենց բնականոն հերթական ժողովներն ու աշխատանքները: Անոնք շուտով պիտի պատրաստեն իրենց հայաստանադնացութիւնը ամփոփող տեսերիզ մը: Մի քանիները արդէն իսկ թուղթին յանձնած են իրենց տպաւորութիւնները (կարգալ յաջորդ թիւի Մանկապատանեկան բաժինին մէջ):

Հոկտեմբեր 11-14 պատանիները պիտի մասնակցին տարեկան Համագանատական սեմինար-բանակումին՝ «Արցախեան Զինադադարի 25-ամեակ» թեմայով, ուր պիտի լսեն դասախոսութիւններ, մասնակցին աշխատանոցներու եւ ունենան մարզական եւ ընկերային պահեր:

Անհրաժեշտ կը նկատենք յիշեցնել, որ Պատանեկան միութիւնը գաղութի մը բջիջն է, ուր հայ պատանին կը սորվի յարգել ընկերներուն կարծիքը, արտայայտել նաեւ սեփական միտքեր, ենթարկուել կարգապահական օրէնքներուն եւ կազմակերպել ու գործել հաւաքաբար: Ասոնց կողքին, ան կը տողորուի ազգային գիտակցութեամբ, կը դառնայ մարդու եւ հայու իրաւունքներուն քաջածանօթ, եւ այսպէս կը մշակուի հաւաքականութեան ծառայելու իր պատրաստակա-

մութիւնը: Պատանին կը սորվի, որ ինք մաս կը կազմէ իր նմաններէն բաղկացած, բայց ընդհանրական նպատակներ հետապնդող մարդոց խումբի մը, ժողովուրդի մը, ազգի մը:

Սակայն, երբ յետադարձ ակնարկ մը նետենք Պատանեկան միութիւններու առաքելութեան վրայ, պիտի նկատենք, որ այսօր շատ բան փոխուած է: Օրին, ծնողքը ինքնաբերաբար, կեանքի բնական ընթացք համարելով կը յանձնէր զաւակը Պատանեկան միութեան դաստիարակութեան, բայց ո՛չ այսօր:

Այսօր, յստակ բացատրութիւններ պէտք է տրուին:

Այսօր, ընկերային ցանցերու միջոցով պէտք է մօտենանք ու ներգրաւենք մեր պատանիներն ու ծնողները:

Այսօր, կայքէջով եւ ե-նամակով պէտք է հաղորդակցինք:

Եւ այսօր, «ժողով» հասկացութենէն դուրս եկած՝ պէտք է այլազան միջոցներով գիտելիք ջամբենք, յեղափոխաշունչ ոգիով գինենք ու յեղափոխական երգեցողութեան վարժեցնենք զիրենք:

Ընդհանուր Վարիչ Մարմինը գիտակից է այս մարտահրաւէրներուն: Սեմինարներով ու լսարաններով, մասնագէտ մանկավարժներու եւ հոգեբաններու օժանդակութեամբ ճիշդ չի խնայեր վերադաստիարակելու իր վարիչ կազմը:

Մեր նպատակը տկարութիւն չի ճանչնար:



Պիտի աշխատինք նորահաս սերունդին մօտենալ իրե՛նց լեզուով, իրե՛նց հասկացողութեամբ: Որպէսզի կերտենք նո՛ր Վազրիկներ, նո՛ր Տաճարներ, նո՛ր Սաթենիկներ:

ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմին

Գանատայի Եարմութ քաղաքին մէջ բացումը կատարուեցաւ Հայոց Ցեղասպանութեան որբերու փրկարար Սառա Քորնիկի արձանին

Շաբաթ, 14 Սեպտեմբեր 2019-ին, կէսօրէ ետք ժամը 1-ին, Գանատայի Եարմութ քաղաքի պատմութեան թանգարանի շրջափակէն ներս, տեղի ունեցաւ բացումը Հայոց Ցեղասպանութեան որբերու փրկարար Սառա Քորնիկի արձանին, կազմակերպութեամբ «Սառա Քորնիկ» հիմնարկին, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Գանատայի մօտ ՀՀ դեսպան Անահիտ Յարութիւնեանի, համագործակցութեամբ ՀՅԴ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին, Եարմութ քաղաքի քաղաքապետարանին եւ Ցեղասպանութեան Ուսուցման Սառա Քորնիկ կեդրոնին: Ձեռնարկին ներկայ եղան Նովա Սթոչիա նահանգի ընդհանուր կառավարիչ Արթուր Լէպլանդ, Գանատայի Հայոց Թեմի առաջնորդական փոխանորդ Հոգ. Հ. Գեղարդ Վրդ. Քիւսպէկեան, նահանգային նախարարներ Զաք Չըրչիլ եւ Լաւրի Քասուրիս, խորհրդարանի եւ ծեռակոյտի անդամներ, Եարմութի քաղաքապետ Փաթ Մուտ, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի, Հայ Դատի շրջանային յանձնախումբի եւ Ցեղասպանութեան Ուսուցման Սառա Քորնիկ կեդրոնի ներկայացուցիչներ:

Յուշարձանին հեղինակ-քանդակագործն է Հայրենի արուեստագէտ Կարէն Պետրոսեան, իսկ մեկենասները՝ տէր եւ տիկին Սիմոն եւ Մարալ Հասերճեանները:

Բացման արարողութեան ընթացքին խօսք առին Նովա Սթոչիա նահանգի ընդհանուր կառավարիչ Արթուր Լէպլանդ, Եարմութի քաղաքապետ Փաթ Մուտ եւ Ցեղասպանութեան Ուսուցման Սառա Քորնիկ կեդրոնի հիմնադիր Ռաֆֆի Սարգիսեան, որոնք ներկայացուցին Քորնիկի կենսագրականն ու գործունէութիւնը, դրուատելով անոր անձնուէր աշխատանքն ու նուիրումը հայ ժողովուրդին ու մարդկութեան:

Նախքան արձանին քօղազերծումը, տեղի ունեցաւ կենդանի պատկեր մը, որով ներկայացուեցաւ Քորնիկի հոգածութիւնը հայ որբերուն հանդէպ: Քօղազերծումը կատարեցին խումբ մը փոքրիկներ, խորհրդանշելով Քորնիկի փոքրիկներ եւ որբեր ազատելու

առաքելութիւնը:

Քօղազերծումէն ետք յուշարձանը օրհնեց Հոգ. Տ. Գեղարդ Վրդ. Քիւսպէկեան:

Անկէ ետք քաղաքապետարանէն ներս տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք, հիւրընկալութեամբ Եարմութի քաղաքապետ Փաթ Մուտի, որուն ընթացքին խօսք առին նախարարներ Չըրչիլ եւ Քասուրիս, ինչպէս նաեւ Գանատայի Մարդկային Իրաւանց Թանգարանի խորհուրդի անդամ Պէնճամին Նայբում: ՀՅԴ Հայ Դատի յանձնախումբին անունով խօսք առաւ յանձնախումբի անդամ Շահէն Միրաքեան, որ դրուատեց Քորնիկի աշխատանքն ու նշեց անոր յիշատակման անհրաժեշտութիւնը: Հայ Դատի Օթթաուայի գրասենեակի գործավար Սեւակ Պէլեան ներկայացուց դեսպան Յարութիւնեանը, որմէ ետք տիկին դեսպանը փոխանցեց օրուան գլխաւոր պատգամը՝ վեր առնելով Քորնիկի ու անոր գործակիցներուն նուիրումը եւ նշելով Հայ ժողովուրդին երախտապարտութիւնը: Ան նաեւ անդրադարձաւ հայ եւ դանատացի ժողովուրդներուն բարեկամութեան եւ այդ յարաբերութիւններուն խորացման անհրաժեշտութեան:

Աւարտին, քաղաքապետ Մուտ դեսպան Յարութիւնեանի յանձնեց յուշանուէր մը:

Նշենք, որ Շաբաթ առաւօտեան Ցեղասպանութեան Ուսուցման Սառա Քորնիկ կեդրոնի ներկայացուցիչները շրջանի ուսումնական խորհուրդի անդամներուն ներկայացուցին յատուկ դասախօսութիւն մը՝ ցեղասպանութեանց ուսուցման մեթոտաբանութեան մասին:

Իսկ Կիրակի առաւօտ, Դեսպան Յարութիւնեան յատուկ հանդիպում մը ունեցաւ քաղաքապետ Մուտի հետ, քննարկելու հայաստանեան քաղաքի մը եւ Եարմութի միջեւ համագործակցութեան դաշինքի մը ստորագրման հնարաւորութիւնները: Սոյն հանդիպման նաեւ մասնակցեցան Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները:



Վատնուած Է Հիմնական Ներուծը

Տարիներ առաջ հեռուստատեսութեամբ հետեւում էի մի երկրում ընթացող յեղափոխական գործընթացներին։ Շաբաթներ շարունակուող ցոյցերի ու երթերի մասնակից, միլիոն մարդը գերազանցող, ամբոխը իշէցնում էր մթագնած գիտակցութեամբ կատաղի գազանի, որն իր առաջնորդի կոչով պատրաստ էր կործանել ու ոչնչացնել ճանապարհին հանդիպած ամէն բան։ Այն ժամանակ մտածում էի, որ հայ ժողովուրդն իր բարձր գիտակցութեամբ եւ հասարակութեան անդամների ընդգծուած անհատականութեամբ ապահովագրուած է ամբոխի վերածուելու փորձութիւնից։

Սա այն ժողովուրդը չէ, որ քաղաքական, կրօնական, կամ այլ առաջնորդի ձեռքի շարժումով նետուի առաջ՝ կատարելու համար իր կուռքի ցանկութիւնները։ 1988 թուականին տեղի ունեցածն իսկապէս ազգի քաղաքակրթական որակը բնորոշող ժողովրդային շարժում էր՝ կազմակերպուածութեամբ, մասնակիցների վերաբերմունքով միմեանց եւ ուրիշների հանդէպ, առաջ քաշած համազգային յստակ նպատակներով եւ դրանց իրականացմանն ուղղուած միասնական ջանքով։ Այն օրերին, օրինակ, յանցագործները հաւաստիացրին Ազատութեան հրապարակում հաւաքուող հանրութեանը, որ նրանց բացակայութեան ժամերին բնակարաններից գողութիւններ չեն կատարուի։ Հետագայ ժամանակները սակայն ապացուցեցին, որ ե՛ւ հայ ժողովրդի միջից ե՛ւ քաղաքական–քաղաքակրթական հզօր հենք ունեցող աշխարհի ցանկացած ժողովրդից, համապատասխան հանգամանքներում, կարող է գոյանալ նպատակասեւեռ, ատելութեամբ լիցքաւորուած, անսանձելի, բայց առաջնորդներին հլու այն կտրիկական զանգուածը, որը եւ վերածւում է ամբոխի։

Ամբոխի մտածողութիւնը մակերեսային է, պատճառահետեւանքային կապերը որոշելու հարցում՝ պարզունակ։ Երբ զանգուածը վերածւում է ամբոխի, այլեւս նրա «սնունդը» դառնում է գործողութիւնը, նա պահանջում է առաջնորդներից յստակ յանձնարարականներ, որոնք կատարելով՝ կարճ ժամանակում հնարաւոր կը լինի հասնել իր ձեւաւորման պատճառը հանդիսացած երեւոյթների վերացմանը։ Ամբոխը բաղկացած է մէկը միւսի խանդավառութեամբ վարակուող եւ իր նմանների բազմաքանակութիւնը ընտրած ճանապարհի ճշմարտացիութեան գլխաւոր փաստարկ համարող միաւորների բազմութիւնից, որին մաս կարող են կազմել ե՛ւ չկրթուածը ե՛ւ կրթուածը ե՛ւ գիւղացին ու մտաւորականը ե՛ւ բազմաշերտ հասարակութեան ցանկացած խաւի ներկայացուցիչ։

Եթէ նախկինում առաջնորդողների յաւակնութիւն ունեցողները պէտք էր կարողանային սեփական յատկութիւնների գնով հրապարակներում ժողովրդային զանգուածներ հաւաքել եւ պահել այնտեղ երկար ժամանակ, ապա ներկայիս տեղեկատուական հնարաւորութիւններին լաւ տիրապետելով՝ կարելի է ազդել աշխատավայրում կամ տանը նստած մարդկանց վրայ հեռահար կերպով եւ ինքն իր կապի միջոցի հետ ունեցած այդ մտերիմ շփման ժամանակ ստիպել ենթակային յանգելու ցանկալի տրամադրութիւնների եւ եզրահանգումների։ Այդ պատճառով էլ յանկարծ ներհասարակական կեանքը փոթորկող առաջնահերթ խնդիրներ են դառնում այնպիսի հիմնահարցեր, որոնք նախկինում էլ գոյութիւն են ունեցել, բայց կա՛մ չեն փոթորկել մարդկանց, կա՛մ վաղուց մոռացուած են եղել։

Ինչպէս յայտնի է նոր արհեստագիտութիւնների հնարաւորութիւնները արդիւնաւէտօրէն իրացուեցին աշխարհում տեղի ունեցած գունաւոր յեղափոխութիւնների ժամանակ, իսկ Հայաստանում վերջինիս առաջին փորձարկումը տեղի ունեցաւ 2008 թուականի մարտի 1–ին ծաւալուած իրադարձութիւնների ընթացքում։

Այն, ինչ տեղի ունեցաւ 2018–թուականին հայ ժողովրդի մէկ հատուածի հետ՝ Հայաստանում եւ ի սփիւռւս աշխարհի, այլ բան չէր, քան՝ ամբոխային տրամաբանութեամբ ուղղորդուած թիրախային նպատակի իրականացում։

Եթէ արդարացուած կարելի էր համարել մարդկանց ընդվզումը քաղաքական, ընկերային–տնտեսական եւ այլ բնոյթի կուտակուած հիմնահարցերի պատճառով, ապա անտրամաբանական էր սեփական ճակատագրի տնօրինումը յանձնելը մարդկանց, ում ողջ պատկերացումը ապագայի վերաբերեալ, այլ խօսքով՝ քաղաքական փլաթֆորմը, հետեւեալն էր՝ տապալել նախորդներին եւ տիրել նրանց իշխանութեանը։ Խոստանալ պատժել նախկին բոլոր մեղաւորներին՝ չներկայացնելով վաղուայ օրուայ անելիքը քաղաքական, տնտեսական եւ միւս բնագաւառներում։

Յոյգերով առաջնորդուող զանգուածները նախորդներին մերժելու եւ նորերին երկիրը յանձնելու անվերապահ նպատակամղմամբ բացարձակապէս չհետաքրքրուեցին այն հարցով, թէ երկիրն ինչպէ՛ս պէտք է ղեկավարի քատրային նոր կազմը, որը բացարձակապէս գուրկ է մասնագիտական եւ վարչական փորձառութիւնից։

Դժբախտաբար, անկախացման շրջանից սկսած, մեր հասարակութիւնը առաջնորդուել է «մերժելու նախընտրական ծրագրով»։ Գլխաւոր հարցը դիտարկելով եղածից ազատուելը՝ քննարկման առարկայ չի դարձել այն խնդիրը, թէ որո՞ւք են նորերը եւ ի՞նչ են խոստանում։

Սովորաբար պաշտօնեաները, ղեկավարման հարիւր օրը լրանալուց յետոյ, հանդէս են գալիս հաշուետուութեամբ։ Եթէ հարիւր օրը քիչ է արդիւնքներից խօսելու համար, ապա բաւարար է համարւում, որպէսզի ներկայացուեն հայեցակարգերն ու ծրագրերը եւ, ըստ դրանց ձեւնարկուած աշխատանքների, սկզբնական ընթացքը։ Հայաստանի ներկայ իշխանութիւնը երկիրը փաստացի ղեկավարում է մէկ տարի եւ երեք ամիս։

Հակառակ շարունակուող շոուին, առաջընթացի փոխարէն, զարգանում են անորոշութիւններն ու անհանգստութիւնները՝ արտաքին քաղաքականութեան եւ Արցախի հարցերում, ակնյայտ է արտաքին ճնշումների մեծացումը։ Տեղի են ունենում նախկինից գործող քատրերի համատարած կրճատումներ, իսկ նրանց փոխարինող նորերը գուրկ են սեփական պարտականութիւնները գիտակցելու եւ իրականացնելու կարողութիւնից։

Երկրի տնտեսական զարգացման ուղենիշներին փոխարինում են պարզունակ կարգախօսերը, այս եւ այլ գործօններով պայմանաւորուած այդպէս էլ երկիր չհասան խոստացուած ներդրումները։ Երկրում պետական մեքենան գործում է խիստ ցածր արդիւնաւէտութեամբ, եւ հեռու չենք տարբեր ոլորտների կաթուածահարումը տեսնելու իրողութիւնից։ Եթէ ինչ–որ բան արւում է մեծ եռանդով ու հետեւողականութեամբ, քրէական հետապնդումներն ու դատավարութիւններն են։ Այս եւ ոչ միայն այս գործընթացներում գիտակցաբար ու անգիտակցաբար ոտնահարւում են օրէնքն ու օրինականութիւնը։ Այդ ամէնը փոխարինււած է մէկ անձի կամքով։

Հասարակութիւնը պառակտուած է, ներհասարակական մթնոլորտը լարուած է, ոտնահարւում են ազգային–բարոյական ու հոգեւոր արժէքները, հասարակաքաղաքական ընտրախաւի շարքերում գգալի թիւ է կազմում օտար ազդեցութիւններ կրողների ու կասկածելի ֆինանսական աղբիւրներից սնուողների, այլասերուածների ու ապագայինների բանակը։

Օրինաչափօրէն իշխանութեան ընկերային յենարանը կազմող մարդուժը հալւում է՝ արեւի տակ յայտնուած ձնադնդի արագութեամբ։ Ամէնուր աճում է դժգոհութիւնը, որը, ամենայն հաւանականութեամբ, համատարած հիասթափութեան կը վերածուի եւս մէկ դժուար աշուն ու ձմեռ յաղթահարելուց յետոյ։

Ի դէպ, նրանց համար, որոնք ապրել են լեւոն–տէրպետրոսեանական խմբակի կառավարման ժամանակներում, ակնառու պէտք է լինի, որ այս իշխանութիւնը ուղղակիօրէն նրա շարունակութիւնն է։ Հաւանաբար այլ կերպ չէր էլ կարող լինել, երբ նոր շարժման

առաջնորդը հին շարժման առաջնորդների միջավայրում է ձեւաւորուել՝ որպէս անհատ եւ քաղաքական գործիչ, 2008 թուականին Լեւոն Տէր Պետրոսեանի պարտուողական փլաթֆորմով մասնակցել է ընտրութիւնների եւ նոյն մարդու ղեկավարութեամբ սադրել է մարտի մէկն ու ժողովրդին տարել է բախման ոստիկանութեան հետ։ Վերջապէս, այսօր չրջապատուած է այդ խմբակի աչքի ընկնող ներկայացուցիչներով ու հետեւորդներով։ Ի հարկէ առաւել ծանրակշիռ փաստարկը հոգեւոր–գաղափարական ժառանգորդութեան հարցն է, որ նոյնպէս ակնյայտ է եղել ի սկզբանէ, այս զուգահեռները, սակայն, չէի ցանկանայ առաւել մանրամասնել այստեղ՝ չուռճացնելու համար նիւթի ծաւալը։

Իշխանութեան աւելի ու աւելի կեդրոնացումը մէկ մարդու ձեռքում, իշխանութեան բոլոր թեւերի վրայ բացարձակ վերահսկողութիւն սահմանելու ջանքերը, անհանդուրժողութիւնը այլակարծութեան նկատմամբ,կոշտ արձագանգը ընդդիմադիր գործողութիւնների հանդէպ եւ ամէն օր դրսեւորուող այլ երեւոյթներ ցրում են այն պատրանքները, թէ Հայաստանում ժողովրդավարութիւնը պաշտպանուած է։

Ի դէպ, սա «թաւշեայ, ժողովրդական» շարժման նկատմամբ եղած միակ պատրանքը չէր։ Քաղաքացիական յեղափոխութեամբ խանդավառուած ինքնակոչ «տեսաբանները» այդպէս էլ մեզ չբացատրեցին, թէ ի՛նչ նկատի ունէին տեղի ունեցածը յեղափոխութիւն կոչելով՝ քաղաքական համակարգը՝ փոխուեց, փոխուեցին տնտեսական կացութիւձեւը՝ գաղափարաբարոյական արժէքներն ու զարգացման ուղենիշները^o։ Բացի իշխանական քատրերի յեղափոխական փոխանակումի՞ց՝ այդ ինչ տեսան «նոր յեղափոխութեան» տեսաբանները, որ այդպէս էլ ժողովուրդը չի տեսնում։

Եթէ հարցը գեղեցիկ ճառերն են, ապա այդ ո՞վ է փորձել տգեղ ճառերով ժողովուրդ տանել իր ետեւից։

Անցած երեք տասնամեակում տեղի ունեցած ամէն ինչի բացարձակ մերժումը յեղափոխութի՞ւն է, հայրենասիրութի՞ւն, թէ՛ կուրութիւն կամ ինքնադրսեւորման միջոց։ Նոյն, կամ մօտաւորապէս նոյն այս գիտակները նախորդող տարիներին ողջուեցին Հայաստանում տեղի ունեցող իւրաքանչիւր ոճրագործութիւն, արկածախնդրութիւն ու անձերի կամքին ծառայեցուած ինքնանպատակ գործողութիւն, որի թերեւս միակ արժանիքն այն էր, որ ուղղուած էր իշխանութեան դէմ։ Դրանք բոլորը կարճ ժամանակ անց փաստեցին իրենց սնանկութիւնը, իսկ ո՞վ նեղութիւն քաշեց խոստովանելու, որ սխալուել է՝ սին ու վնասակար երեւոյթը գնահատելով որպէս հայրենափրկութեան փաստ։ Նոյն մարդիկ արդեօ՞ք չխրատուեցին կամ չեն կարողանում այսօր գնահատել իրական պատկերը։ Չեմ կարծում, թէ չեն տեսնում, կամ չեն հասկանում, համոզուած եմ, որ այլ չահերով ու նպատակներով են առաջնորդւում, որոշներն էլ այլ ակունքից են ջուր խմում։ Բայց այս դէպքում էլ նրանք յաջողութիւն չեն արձանագրելու, որովհետեւ ճիշդ կամ սխալ լինելը ո՛չ ճաշակի հարց է, ո՛չ տեսական վէճում առաւել խելօք լինելու, ո՛չ էլ այս կամ այն ճամբարի կողմից գործելու, այլ որովհետեւ գործ ունենք մի երեւոյթի հետ, որը հակառակ է հայ ժողովրդի բնական շահերին։

Սա շարժում է ընթացքին դէմ, որը եւ կամաց–կամաց ետ է չալրտելու հոսանքին հակառակ ընթացք պարտադրողներին։ Ես չեմ կարող ասել, թէ դեռ որքան է նաւակի պէս ցնցելու, Հայաստանը այս ու այն կողմ նետելու նրա նոր ղեկավարութիւնը, բայց համոզուած եմ, որ նա արդէն դէպի իր վերջին տանող ճանապարհի վրայ է։ Այս պետութիւնը չունի այն քաղաքական ու տնտեսական ներուժը, որը թոյլ կը տար փակել սահմաններն ու երկիրը երկար ժամանակով պահել ինչ–որ մէկի բռնիշխանական քմահաճութիւնների յորձանուտում։ Իսկ գլխաւորն այն է, որ գրեթէ վատնուած է այս իշխանութեան հիմնական ներուժը՝ մարդկանց հաւատը եւ յոյսը։

ԱՐՏԱԹԷՍ ԾԱՀՊԱԶԵԱՆ

 «Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններուն եւ ժամերուն՝	
Videotron: HD838 կամ SD238 Bell Fibe: HD1216 կամ SD216 Երեքշաբթի - երեկոյեան ժամը 9:00-ին (առաջին սիւրսով) Չորեքշաբթի - կէսօրէ ետք ժամը 2:00-ին Հինգշաբթի- երեկոյեան ժամը 6:00-ին Շաբաթ - առաւօտեան ժամը 7:00-ին, եւ երեկոյեան ժամը 11:00-ին Կիրակի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կէ. ժամը 4:00-ին Երկուշաբթի - առաւօտեան ժամը 6:00-ին, եւ կէ. ժամը 5:00-ին Ուղիղ արձակում www.icitelevision.ca Նուիրատուութիւն կարելի է քնել՝ www.youcaring.com/hayhorizon	

 Թորոնթօյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել -	
Շաբաթ առաւօտեան ժամը 9:00-10:00 Կիրակի առաւօտեան ժամը 6:00-7:00 Երեքշաբթի կէսօրոայ ժամը 12:00-1:00 Հինգշաբթի երեկոյեան ժամը 10:00-11:00 OMNI 1 կայանէն:	

Prime Minister congratulates Horizon on 40th birthday

September 14, 2019
Dear Friends

I am pleased to extend my warmest greetings to the readers of the Armenian weekly newspaper Horizon, on the occasion of its 40th anniversary.

This milestone is a wonderful opportunity to look back on the history of your newspaper and to highlight its achievements. For 40 years, Horizon has faithfully reported on events that have shaped the social, cultural and political landscape of Canada's Armenian community. I am certain that it will continue to enrich the lives of members of this community by giving voice to their hopes and dreams, and by taking part in the great debates of our society. Everyone associated with Horizon can take great pride in their commitment to the community.

On behalf of the Government of Canada, I offer my congratulations and best wishes for every future success.

Sincerely,

THE RIGHT HON. JUSTIN P. J. TRUDEAU, P.C., M.P.
PRIME MINISTER OF CANADA

Assyrian Parliament formed in Armenia

YEREVAN— An Assyrian Parliament was formed in Armenia on September 12 upon the conclusion of a large-scale international conference in Yerevan.

About 40 representatives of Assyrian communities in nine countries came together in Yerevan to discuss their problems and form a parliament. The issue had been on the agenda since 2011-2012.

Armenia was specially chosen as a venue of the conference and formation of the parliament, President of the Atur Assyrian Union, MP Arsen Mikhaylov told Public Radio of Armenia.

“We share a similar fate

with Armenians. We have passed through bitterness and joy. We are glad to be able to gather in Armenia to discuss and realize our goals. We'll try to solve issues facing the Assyrian people worldwide, especially on the territory of historic Assyria,” he added.

The Parliament will raise the issue of the Assyrian Genocide, a genocide that still continues on the historic land of the ancient nation

The Parliament will convene in different countries of the world, but Armenia will be the main centre.

(Armradio)

Archaeologists discover new temple in Armenia's Erebuni fortress

YEREVAN—The foundation of a new temple has been discovered at the Erebuni Fortress in Yerevan by a joint Armenian-French expedition team, bringing the number of temples at the site to three, which in turn allows the fortress to be considered a “cultural-historical complex.”

A gravel ground mosaic existed in front of one of the temples, which suggests that, during the days of Urartu, there was a tradition of holding certain rituals in front of the temples, explained archaeological expedition team leaders Stefan De Champ and Erebuni Museum Director Michael Badalyan during a press conference.

“These excavations are important not only for Armenia's history and archaeology but for the archaeological study of the entire Ancient Middle East. The excavations prove that we must re-value what we know about Erebuni,” Badalyan said.

“The temple's existence proves that, at some point, the Erebuni religious site had

three shrines which functioned simultaneously — the Khald temple, the Iyubsa temple, and the newly discovered temple with powerful foundations. The fantastically beautiful gravel ground mosaic in front of Iyubsa temple was also interesting,” continued Badalyan.

Yerevan City Hall Department of Culture Director, Gor Sargsyan, said the iconic fortress must become one of the top tourism destinations in 2020.

French Ambassador to Armenia Jonathan Lacote highlighted the cooperation between Armenian and French archaeologists in terms of experience exchange and cooperation in academic field. He also noted that he has numerously visited the Erebuni Fortress.

“I came here two weeks after being appointed ambassador because I wanted to see the area by the name of which Yerevan is called,” said Lacote.

Armenian and French archaeological teams are carrying out excavations at the site since 2008.

(Armenpress)

Pashinyan fires Vanetsian

YEREVAN—Prime Minister Nikol Pashinyan dismissed on September 16 Armenia's National Security Service chief Arthur Vanetsyan, in a move that Pashinyan called a “mutual agreement.” In a separate announcement, Vanetsyan said he had resigned his post hinting at disagreements with the prime minister.

“I have signed the motion on dismissing the director of the national security service,” said Pashinyan. Later in the day, President Armen Sarkissian made Vanetsyan's dismissal official in a signed decree removing him from office.

“This [the dismissal] has taken place in a mutual agreement with the NSS Director as a result of several discussions. We have discussed several options for Mr. Vanetsyan's future activities,” added Pashinyan.

Vanetsyan, who was appointed in May 2018, will remain the head of Armenia's National Soccer Federation.

“I made the decision to resign from the post of Director of the National Security Service of Armenia,” said Vanetsyan in an announcement he issued through his office. “I consider this decision the most preferable and the most grounded option to serve the Republic of Armenia and my people in the current situation and in the context of the future.”

He explained that he has been transparent in carrying out the role of Armenia national security chief, adding that he was guided by

the principle honouring the homeland and the office “above everything.”

“State-building has its logic. Impulsive actions and decisions coupled with a work style of not differentiating between primary and secondary objectives and transient and lasting things is not the path leading to the realization of goals,” Vanetsyan said in his tersely-worded statement, which was released while Pashinyan was holding a press conference during which he touted the “100 accomplishment” of his government.

Vanetsyan said that such work style “has nothing in common with an officer's honor,” adding that the course of events were unbearable to shoulder.

“Let my resignation serve as a sobering ‘Stop’ sign,” Vanetsyan concluded his stament without elaborating.

While Pashinyan declined to respond to the Vanetsyan's criticism when reporters told him about it during his news conference, his spokesperson Vladimir Karapetyan shot back, telling Armenpress that “It has to be clarified who wrote the text attributed to Artur Vanetsian.”

“We hope that its [Vanetsyan's statement] authors are not the PR offices of corrupt persons who have ‘mistakenly’ avoided prosecution,” said Karapetuan. “We are calling on General Vanetsyan not to lose the officer's dignity the he cited.”

French lawmakers visit Artsakh and meet leaders

STEPANAKERT—A delegation of lawmakers from France's National Assembly and Senate, headed by the chair of the France-Artsakh Friendship Group Guy Tiessier arrived in Stepanakert on September 10 and met with the leaders of Artsakh on the morrow in a series of meetings that highlighted cooperation with France and advancing Artsakh's right to self-determination on the world stage.

Artsakh President Bako Sahakian welcomed the delegation and after briefing the French lawmakers about the current developments, he underscored that Artsakh was interested in advancing cooperation with France, which he said would be a significant turning point in the country's foreign policy.

The delegation also met with Artsakh Foreign Minister Masis Mayilian who underscored the importance of the visit and the opportunity it provided for French lawmakers

to gain first-hand knowledge about the current situation in Artsakh, which would help in furthering relations between Artsakh and France.

Mayilian touched upon the state-building process and the democratic developments taking place in Artsakh, in particular, the recent elections to the local self-government bodies. The Foreign Minister stressed that Sunday's election served as yet another manifestation of the process of advancing of Artsakh's domestic priorities, based on democratic values.

The sides assessed the achievements and challenges in advancing bi-lateral relations and stressed the need for Artsakh to continue developing relations with the international community and highlight the fundamental rights and freedoms by its citizens.

Mayilian emphasized the need to multiply efforts toward the development of parliament-

ary diplomacy and decentralized cooperation between the two countries, emphasizing the key role the France-Artsakh Friendship Group plays in that regard.

During a meeting with Speaker of Artsakh's Parliament Ashot Ghulyan, the sides discussed advancing cooperation between the two countries' legislatures.

Tiessier, the leader of the French delegation, expressed willingness to raise awareness about Artsakh around the world.

During a special ceremony at Stepanakert's War Volunteers Park following the meeting, Ghulyan and Tiessier were joined by members of the delegation and other officials in inaugurating a sign that celebrates the friendship between France and Artsakh.

“I congratulate everyone on another symbol of Artsakh-France cooperation and wish perpetuity to our friendship,” said Ghulyan during remarks at the ceremony.

A new home for Cilicia, the Armenian ship

BY HOVSEP DAGHDIGIAN

